Նախագիծ
Երկրորդ ընթերցում

Պ-268-04.09.2019,16.10.2019-ՏՏԳԲ-011

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

Օ Ր Ե Ն Ք Ը

«ՍԵՎԱՆԱ ԼՃԻ ԷԿՈՀԱՄԱԿԱՐԳԻ ՎԵՐԱԿԱՆԳՆՄԱՆ, ՊԱՀՊԱՆՄԱՆ, ՎԵՐԱՐՏԱԴՐՄԱՆ ԵՎ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ՏԱՐԵԿԱՆ ՈՒ ՀԱՄԱԼԻՐ ԾՐԱԳՐԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. «Սեվանա լճի էկոհամակարգի վերականգնման, պահպանման, վերարտադրման և օգտագործման միջոցառումների տարեկան ու համալիր ծրագրերը հաստատելու մասին» 2001 թվականի դեկտեմբերի 14-ի ՀՕ- 276 օրենքի (այսուհետ՝ Օրենք) 6-րդ գլխի 6.1 կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«6.1. Սևանա լճից ջրի բացթողումների տարեկան առավելագույն քանակ սահմանել մինչև 170 մլն մ^3, բացառելով սույն չափաքանակից ավելի ջրառի իրականացումը Սեւանա լճի բացասական հաշվեկշռի պարագայում:

Օրենքով սահմանված կարգով կառավարության որոշմամբ Հայաստանի Հանրապետության ամբողջ տարածքում կամ դրա մի մասում սակավաջրություն կամ երաշտ հայտարարելու դեպքում, կառավարությունը «Սեվանա լճի մասին» օրենքով սահմանված կարգով կարող է Ազգային ժողովին ներկայացնել չափաքանակի փոփոխության մասին ժամանակավոր ծրագիր, որը հաստատվում է համապատասխան օրենքի ընդունմամբ:»:

Հոդված 2. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ
ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ, ՏԵՂԱԿԱՆ ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՄԱՆ
ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ԵՎ ԲՆԱՊԱՀՊԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԵՐԻ ՄՇՏԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԱՇԽԱՏԱԿԱՐԳԻ

ԱՄՓՈՓԱԹԵՐԹ

(Պ-268-04.09.2019-ՏՏԳԲ-011/1) «Սեւանա լճի էկոհամակարգի վերականգնման, պահպանման, վերարտադրման եւ օգտագործման միջոցառումների տարեկան ու համալիր ծրագրերը հաստատելու մասին» օրենքում լրացում կատարելու մասին» օրենքի նախագծի վերաբերյալ ներկայացված գրավոր առաջարկներ

ԱՌԱՋԱՐԿԻ ՀԵՂԻՆԱԿԸ	ՆԱԽԱԳԾԻ ԱՅՆ ՄԱՍԸ, ՈՐԻՆ ՎԵՐԱԲԵՐՈՒՄ Է ԱՌԱՋԱՐԿԸ	ԱՌԱՋԱՐԿԸ	ԱՌԱՋԱՐԿՆ ԸՆԴՈՒՆԵԼՈՒ ԿԱՄ ՄԵՐԺԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՀԻՄՆԱԿԱՆ ԶԵԿՈՒՑՈՂԻ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆԸ	ԱՌԱՋԱՐԿՆ ԸՆԴՈՒՆԵԼՈՒ ԿԱՄ ՄԵՐԺԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՈՐՈՇՈՒՄԸ
Վ. Կարապետյան	«Սեւանա լճի էկոհամակարգի վերականգնման, պահպանման, վերարտադրման եւ օգտագործման միջոցառումների տարեկան ու համալիր ծրագրերը հաստատելու մասին» օրենքում լրացում կատարելու մասին» օրենքի նախագիծ	Նախագծի վերնագրի «լրացում» բառը փոխարինել «փոփոխություն» բառով:	Ընդունվել է	Ընդունվել է
Վ. Կարապետյան	*Հոդված 1.* «Սեւանա լճի էկոհամակարգի վերականգնման, պահպանման, վերարտադրման եւ օգտագործման միջոցառումների տարեկան ու համալիր ծրագրերը հաստատելու մասին» 2001 թվականի դեկտեմբերի 14-ի ՀՕ-276 օրենքի (այսուհետ՝ Օրենք) 6-րդ գլխի 6.1	«6.1. Սևանա լճից ջրի բացթողումների տարեկան առավելագույն քանակ սահմանել մինչև 170 մլն մ^3, բացառելով սույն չափաքանակից ավելի ջրառի	Ընդունվել է	Ընդունվել է

	կետի 1-ին պարբերության «մինչեւ 170 մլն մ^3 » բառերից հետո լրացնել«սահմանափակելով օրենքով նախատեսված չափաքանակից ավել ջրառի իրականացումը Սեւանա լճի բացասական հաշվեկշռի պարագայում» բառերը:	իրականացումը Սեւանա լճի բացասական հաշվեկշռի պարագայում: Օրենքով սահմանված կարգով կառավարության որոշմամբ Հայաստանի Հանրապետության ամբողջ տարածքում կամ դրա մի մասում սակավաջրություն կամ երաշտ հայտարարելու դեպքում, կառավարությունը «Սեվանա լճի մասին» օրենքով սահմանված կարգով կարող է Ազգային ժողովին ներկայացնել չափաքանակի փոփոխության մասին ժամանակավոր ծրագիր, որը հաստատվում է համապատասխան օրենքի ընդունմամբ:»:		
<< Կառավարություն բանավոր	***Հոդված 1.*** «Սեւանա լճի էկոհամակարգի վերականգնման, պահպանման, վերարտադրման եւ օգտագործման միջոցառումների տարեկան ու համալիր ծրագրերը հաստատելու մասին» 2001 թվականի դեկտեմբերի 14-ի ՀՕ-276 օրենքի (այսուհետ՝ Օրենք) 6-րդ գլխի 6.1 կետի 1-ին պարբերության «մինչեւ 170 մլն մ^3 » բառերից հետո	Նախագծի հոդված 1-ում «տարածքում» բառից հետո լրացնել «կամ դրա մի մասում սակավաջրություն կամ» բառերը	Ընդունվել է	Ընդունվել է

	լրացնել «սահմանափակելով օրենքով նախատեսված չափաքանակից ավել ջրառի իրականացումը Սեւանա լճի բացասական հաշվեկշռի պարագայում» բառերը:			